

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Կայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Կայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1895 ԹԻԱԿԱՆԻՆ

23-ՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

23-ՐԴ ՏԱՐԻ

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի թիֆլիսում, նոյն գիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղու-
թեամբ: Մենք ստանում ենք սեփական ՀեՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տաճար և
մէկ և տաճար ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ.,
հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսա-
նը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ»-ը գրվել կարելի է ՌՄԱՎԱՐԱՏԱՆԸ (Բաղարնայա և Բարոնսկայա փողոցների անկիւն):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ»-ը գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ձրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ
արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal armenien «MSCHAK».

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԻԴԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ հաղորդում է ի գիտութիւն ընդհանուր, որ ընկերութեան
գրամարկը, ժԱՄԱՆԱԿԸ ՀԱՍԱՆՎԱԾԱՐԸ ՎՃԱՐՆԵՐԸ ՄՏՅՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ, բաց կը լինի դեկտեմբերի
27-ին, առաւօտեան 11 ժամից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ: 1—1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամենայն հայոց կաթողիկոսի ծանապարհորդու-
թիւնը. Մամուլի կարծիքը թիւրքաց հայերի հարցի
մասին. Թիւրքաց հայերի ինքնավարութիւնը. Մի-
ջազային յանձնաժողով.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ
Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողո-
վը. Սովետների օգտին. Նամակ Նոր-Բայազէթից.
Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.— ԱՐՏԱ-
ՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից.— ՀեՌԱ-
ԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱ-
ԿԱՆ. Մարգարիտային գրականութիւնից.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՆԱԳԱՐ-
ՀՈՐԻՈՒԹԻՒՆԸ

Այսօր թիֆլիս պէտք է ժամանէ Էժ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱՅԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Սուտը աշխարհ է եկել մարդու հետ և բուն
է դրել գրականութեան մէջ նրա սկզբնաւորու-
թեան օրից: Միշտ եղել են հրապոյրներ ստեղծ
և մարդիկ կեղծել են իրանց գործունէութեան
քուրը ասպարէզներում: Սակայն գրանցողութիւնը
լայն ծաւալ ստացաւ միայն այն ժամանակից,
երբ մարդ արտադրութիւնները դարձան մի տե-
սակ ապրանք, որ կարելի է ծախել և առնել:
Այդ ժամանակ ստեղծվեց մի տարբերակ գրա-
կանութիւն, գրականութիւն՝ իր կեղծիքներով,
նենգութիւններով, խարդախութիւններով, մի խօսքով՝
ֆալսիֆիկացիայի գրականութիւն, որ իր
թունաւոր հիւթերով վարակում է եւրոպական
ազգերի հասարակական կազմը:

Այդ մարգարիտային գրականութիւնը ա-
մենաճաշկեղ զբոսն է միշտ և գտնվում այժմ
Ֆրանսիայում: Պահամալի խայտառակութիւնը և
վերջերքս բացված շատ տաճիւտներ ի գործը
պարզ ցոյց են տալիս, որ Ֆրանսիայում գոյու-
թիւն ունի մի իւրատեսակ բօրսա, որ ի վա-
ճառ է հանվում ժողովրդի գրիչը, ուր ծա-
խում և առնում են արդիւնքի անձանց լուրերի-
նը, ուր շինծու լուրերը և սուտ գովասանքները
փոխանակութեան առարկայ են դառնում այն-
պէս, ինչպէս արժէթիթերը իսկական բօրսայում
Պակային Ֆրանսիան բացառութիւն չէ կազմում
Ֆրանսիայում. նա միայն աւելի է զարգացրել իր
մէջ այդ երեւոյթը, որ առաջնաւորվ այժմեան
քաղաքակրթութեան որոշ մութ կողմերից, յա-
տուկ է ըլլոր եւրոպական ազգերին և տարած-

միածին գահակալը՝ ամենայն հայոց կա-
թողիկոսը:

Մի ամբողջ տարի էջմիածնի վանքում
մնալուց յետոյ, ամենայն հայոց կաթողիկո-
սը այժմ Թիֆլիս գալով ժողովրդի ցան-
կութեան է լիութիւն տալիս. և հասարա-
կութիւնն անմիջապէս իր շրջանում տես-
նելով իր հոգեւոր պետին, անկասկած կը
շտապի յայտնելու նրան իր ընթացիկ կա-
րիքները, իր պէտքերը և ցանկութիւնները,
որոնք կապ ունեն հայոց կաթողիկոսի ի-
րաւասութեան հետ:

Հայոց կաթողիկոսներից ամենաարժանա-
ւորը, Ներսէս Աշտարակեցի, շատ լաւ
գիտէր, որ ժողովրդի առօրեայ պէտքերի
հետ ծանօթանալու, ժողովրդի տրամադրու-

վում է ամեն տեղ, ուր ոտք է կոխում այդ ազգե-
րի կուլտուրան: Այդ երեւոյթը օտար չէ նոյնպէս
առասաց գրականութեան և նոյն իսկ մեր նորա-
ծին գրականութեան, որ առանց այն էլ չէր կա-
րող շատ անհնգ լինել իրեն արդասիք այնպիսի
մի ազգի հոգեկան կեանքի, որ նոր է աչք բա-
նում դարաւոր ստրկութիւնից:

Անուշաղիթ թողնել այդ գրականութիւնը ան-
կարելի է: Նա թունաւորում է այն աղբիւրը,
որից սնվում է հասարակաց միտքը, և հետզհետեւ
ոյժ առնելով այնքան զօրանում է, որ ամբողջ
մի կառավարութիւն դժուար գործ է համա-
րում կուռել նրա հետ: Մեղանում նա դեռ սաղ-
մային դրութեան մէջ է. պէտք է այժմից իսկ,
երբ դեռ ուշ չէ, սկսել մաքաւել նրա դէմ. պէտք
է խանձարութեամբ խեղդել այդ հրէշը, որ յետոյ
շատ աւելի կը լինի. պէտք է քայլ առ քայլ
հալածել այն գաղափարագիտներին, որոնք
գրականութեան տաճարը դարձնում են «այդ ա-
ւաղակաց»:

Չէ կարելի անտեսանել և օտարազգի մարգա-
րիտային գրականութեան այն արտադրութիւնները,
որոնք վերաբերվում են հայերիս, սկսած զանազան
Չինգիսիանների յօդուածներից մինչև այն «հեր-
բուհները», որոնցով աշխատում են հաւատացնել
ամբողջ աշխարհին, թէ հորթն է կերել դայլին և
ոչ թէ գայլը հորթին:

Անարթ գործ է բանակուել այդ պարոնների
հետ, բայց անհրաժեշտ Սկսե՛ք ուրեմն՝ յուսա-
լով ճշմարտութեան ոյժի և նրա հակառակորդնե-
րի յիմարութեան վրա:

Սկսե՛ք փոքրից: Ինչպէս յայտնի է, տխրա-
հուսակ Ալեքեանին խնկարկող թերթի աշխատա-
կիցների մէջ, այդ լրագրի խմբագրի ասելով,
պատուաւոր տեղ է բռնում մի պարոն՝ Արշակ
ճննելիս:

Թեան մասին ամենաճիշդ և անխորհրդա-
գաղափար կազմելու համար, ամենաուղիղ
ճանապարհը այն է, երբ կաթողիկոսը մի-
մի անգամ դուրս գալով էջմիածնի վանքից,
մտնում է ժողովրդի մէջ, որպէս զի իր ա-
կանջով լսի ժողովրդի կարիքները, խնդրե-
րները, հոգսերը:

Հասարակութեան շատ ցանկութիւնները,
առաջարկութիւնները, որոնք գուցէ չեն
հասնում մինչև էջմիածնի վեհարանը, զա-
նազան հարցեր, որոնց մասին դժուար է
ժողովրդից կտրված էջմիածնի մէջ որոշ
գաղափար ունենալ, այստեղ, բուն ժողովու-
րդի մէջ, մանաւանդ կովկասի հայոց մտա-
ւոր կենտրոնում լսելի կը լինեն, կը պարզ-
վեն, և գուցէ կանոնաւոր և ցանկալի ըն-
թացք կը ստանան:

Ահա այդ պատճառով միանգամայն ու-
րախալի է, որ վեհափառը մի ամբողջ
տարի էջմիածնի վանքում մնալուց յետոյ,
այժմ դուրս է գալիս դէպի ժողովուրդը,
լսելու հասարակութեան ցանկութիւնները
և ծանօթանալու նրա կարիքներին:

ՄԱՍՈՒԼԻ ԿԱՐԾԻՔԸ ԹԻՒՐԿԱՅ ՀԱՅԵՐԻ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Լօնդոնից Պետերբուրգի լրագրիներին
հեռագրում են, որ Մեքսստիայում հայերի
և թիւրքերի մէջ տեղի ունեցան ընդհա-
րուածներ, որոնց մանրամասնութիւնները
թիւրքաց կառավարութիւնը աշխատում է
ծածկել: Սպանված են մի քանի հարիւր
հայեր և թիւրքեր:

Լօնդոնի «Daily News» լրագրին Կ.
Պոյսից հեռագրում են, որ Միացեալ-Նա-
հանգներին ներկայացուցիչը առաջարկեց
թիւրքաց բարձր կառավարութեան, որ
քննիչ յանձնաժողովի մէջ մասնակցէ և մի
հայ: Այդ վերին աստիճանի խնջալի և

Թումանեան անունով: Ինչով է արժանացել այդ
պարոնը այդ պատուաւոր տեղին, մենք չը գի-
տենք. մեզ այնքան է միայն յայտնի, որ նա ո-
չինչ չէ տուել հայ գրականութեան, բացի մի
շարք պատկերներէն, որոնց միակ առաւե-
րութիւնն այն է, որ նրանք չունենան յարմարու-
թեամբ կարող են կարգադրել վերջից և միջից,
որքան և սկզբից: Սակայն հարցը դրանում չէ-
այժմ մենք ուզում ենք խօսել այդ պարոնի մի
նոր սխրագործութեան մասին, որի համար ա-
պարէզ է ընտրել նա մի ուսն անյայտ լրագրի
էջերը:

«Մշակ» ընթերցողները գիտեն, որ Խրիչ Վե-
սելովսկին, որ մասնաւորապէս պարագում է
հայոց գրականութեամբ և միշտ աշխատում է
ծանօթացնել իր հայրենակիցներին հայոց մտա-
ւոր—բարոյական կեանքի աչքի ընկնող երեւոյթ-
ներին հետ, «Русскія Вѣдомости» լրագրի մէջ
ապել է մի գեղեցիկ յօդուած հայոց մամուլի
հարեւրամեակի առիթով: Կարելի էր կարծել, որ
ամեն մի հայ համակրութեամբ միայն կարող
է վերաբերվել դէպի պ. Վեսելովսկու գործու-
նեւթիւնը ընդհանրապէս և դէպի այդ յօդուածը
մասնաւորապէս: Սակայն ուրիշ կերպ է դասել
այդ Ար. Թումանեանը. նրան մղելով վերջինիւն
խայտառակ հերքումն Ռոստովի «Приазовскій
Край» լրագրում, որի հրատարակիչը, եթէ չենք
սխալվում, մի հայ վաճառական է:

Ահա այդ հերքման մասին ենք ուզում մենք
խօսել այս անգամ, բայց պէտք խոստովանելու,
որ չը գիտենք՝ որ ծայրից սկսե՛ք արձակել
այդ անհեթեթութիւնների հանգոյցը, ինչպէս
բացականչում է Մակոլէյը մի անմիտ գրուածը
ճննելիս:

արդար առաջարկին թիւրք կառավարու-
թիւնը վերաբերվեց թշնամաբար: Մինչդեռ
Կ. Պոյսի հայոց պատրիարքարանը կատա-
րեալ իրաւունք ունի իր հայ ներկայացու-
ցիչը ունենալ, որը մի կողմից կը պաշտ-
պանէր հարստահարվածների շահերը, և
միւս կողմից, իրեն ծանօթ տեղական լե-
զուին և կեանքին, առատ նիւթ կը մատա-
կարարէր եւրոպական յանձնաժողովին:

Կերմանական «Berliner Tageblatt»
լրագրում տպված է երկու նամակ հայոց
հարցի առիթով. մէկը Կ. Պոյսից, միւսը
Աթէնքից: Առաջին նամակի մէջ, ի միջի
այլոց, հաղորդվում է հետեւեալը. «Հայ
ազգաբնակչութեան դժգոհութեան հազա-
րաւոր» պատճառներից մէկն էլ Անգլիայի
հայ կոմիտէները համարում են այն, որ
Բ. Դուռը սիստեմատիկաբար մերժում է չէր
թոյլատրում նոր պատրիարքի ընտրութիւ-
նը: Պատրիարքական այդ դահլ թափուր
էր մնում այն ժամանակից, երբ ներկայ
տարվայ ամառը վերջին պատրիարքը հը-
րաժարական տուեց. բայց դրա մէջ մեղա-
ւորը ոչ թէ թիւրքաց կառավարութիւնն
էր, այլ հայերի մէջ տեղի ունեցած երկ-
պառակութիւնը: Բ. Դուռը ցանկանալով
վերջ դնել իր վրա բարգաժ մեղադրանե-
րին, նոր պատրիարք ընտրելու նախաձեռ-
նութիւնը յանձն առաւ: Ընտրվեց Մատ-
թէոս Իզմիրլեան, դեռ ևս բնակական ջահիլ
մարդ (նա մօտ 50 տարեկան է):»

Կերմանական նոյն լրագրում Աթէն-
քից գրած նամակում խօսվում է գլխաւո-
րապէս Թիւրքիայի, Ռուսաստանի և Անգ-
լիայի փոխադարձ յարաբերութիւնների մա-
սին. «Աթէնքում ստացված տեղեկութիւն-
ների համեմատ, վերջին ժամանակներս
Անգլիայի և Բ. Դրան մէջ յարաբերութիւն-
ները այնպէս լարվեցին, որ այստեղի դիպ-
լոմատներից մէկը հետեւեալ խօսքերով բը-
նորոշեց այդ յարաբերութիւնը. «C'est

երեւակայեցէ մի շարք սուտեր՝ արտայայտված
այնպիսի նախադասութիւններով՝ որոնք կարծէք
դիտմամբ կազմված են իրեն օրինակ տրամաբա-
նական և քերականական սխալներով: Աւելայե՛ք
դրա վրա այն աշակերտական տօնը, որով զըր-
ված է ամբողջ յօդուածը և դուք մօտաւորապէս
ճիշդ գաղափար կը կազմէք այդ գրականական
մարդաբան մասին:

Հերքումը սկսվում է մի սուտով: Պ. Վեսե-
լովսկու յօդուածի վերնագրից, նրա բովանդակու-
թիւնից և վերջապէս այն առիթից, որով գրված
էր նա, ակնյայտի երեւում է, որ յօդուածագիրը
խօսում է միայն հայոց պարբերական մամուլի
մասին: Բայց այդ ձեւաւոր չէ եղել Ռոստովի
թերթի յօդուածագրի շահերին, ուստի նա ա-
ռանց այլ և այլով թեան իր հերքման սկզբում
յայտնում է, թէ «Այդ յօդուածով պ. Վեսելովս-
կին ակնեւաբար կամեցել է ծանօթացնել ուսն
հասարակութիւնը հայոց նորագոյն մամուլի և
գրականութեան անհնգալ պատմութեան հետ»:
Այդ սուտը անհրաժեշտ է եղել յօդուածագիր
Թումանեանին նրա համար, որ նա նետի պ.
Վեսելովսկու հասցեով այսպիսի մի մեղադրանք՝
«Ի նկատի ունենալով, որ պ. Վեսելովսկին հան-
գամանօրէն ծանօթ չէ հայոց գրականութեան,
մենք չենք դարմանում, որ նա իր յօդուածում չէ
յիշել հայոց ամենայայտնի գրողներին, ինչպէս
օրինակ, ամենաժողովրդական ազգային երգիչ
(Пѣвецъ!!) և բանաստեղծ Բ. Պատկանեանին,
միակ թատերադրակ Սունդուկեանին, որի կոտա-
կերգութիւնները ահա արդէն քառորդ դար է ինչ
կազմում են հայոց բեմի բեկորաւորը և որոնք
հաւանականօրէն դեռ երկար ժամանակ կը մնան
բեմի վրա, վերջապէս՝ հայոց ժամանակակից վի-
պագրութեան նախահայր Խ. Աբովեանին, որի

presque une rupture: « խոսում էին միմյանից անգամ, որ չուտով յետ է կանգնելու անգլիական զեմպանը: Սուլթանը և Բ. Դուռը, ի միջի այլոց, սաստիկ զրգուկած էին այն բանի դեմ, որ սրբ Զիլիպ Ալերը պահանջում էր մեծ-վիզիր Զեֆաղ-փաշայի հըրաժարականը: Մեծ-վիզիրը, ինչպես յայտնի է, թշնամի է անգլիացիներին: Այդ բանը պաշտոնական կուսի չէր հաստատվել, և անգլիացիները Քեմալ-փաշայի շնորհիվ էր: »

ԹԻԻՐԱՅ ՀԱՅԵՐԻ ԻՆՖԵՐԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ
(«Новое Время»-ի առաջնորդը)

Եթե կը ճշգրտեն այն տեղեկությունները, որ ստացվում են Կ. Պոլսից թիւրքաց Հայաստանի վարչութեան վերանորոգութեան մասին, որ վրձնակ է մտնել Օսմանեան Դուռը, այն ժամանակ կարելի կը լինի շնորհաբեր սուլթանի կառավարութեանը այն բանի համար, որ նա վերջապէս բաւական նպատակադրմամբ ելք գտաւ այն դժուարութիւններէն, որ մինչև այժմ ստեղծուած էր նրա համար գործերի անբնական դրութիւնը Օսմանեան կայսրութեան վերայնալ մասում:

Հնարաւոր է մինչև անգամ հաւանական է, որ թիւրքաց հայերի քաղաքական ղեկավարները, մասնաւոր նրանք, որոնք ապրում են արտասահմանում, զո՞հ չեն մնայ մի այլպիսի վերանորոգութիւնից և կը փորձեն շարունակել իրանց ազգի տաղանդը. բայց միւս կողմից Բերլինի դաշնագիրը ստորագրող կառավարութիւնների աշխատանքները նոր կարգը այն անկասկածելի օգուտը կունենայ, որ այդ նոր կարգերի ժամանակ աւելի չնշաւ կը լինի սրանից յետոյ ընկել թիւրքաց զաղանութիւնների դէմ հայերի պարբերաբար կրկնվող զանգատները:

Հայերով ընակեցրած չորս վիլայէտների միացնելը և զբանջից մէկ շրջան կազմելը, որը, սակայն, վիլայէտի համետ անունն է պահում և կառավարվում է սուլթանից լինող տարով նշանակված նահանգապետի ձեռքով, և այդ նահանգապետներից առաջինը միայն, Բ. Դուռն յանձն առած պարտաւորութեան համաձայն, պէտք է մասնական լինի, իսկ յետոյ վարչութիւնը պէտք է անցնի հայ ծագում ունեցող քրիստոնեաների ձեռքը:— Իր տալ Հայաստանի հողային և վարչական կազմակերպութեանը շրջանային ինքնավարութիւն ունեցող փոխարքայութեան այն բնաւորութիւնը, որ Բ. Դուռը, եօթնամեակային թաւկանջներին, եւրոպական պետութիւնների ճնշման տակ, տուեց կանգնալիս, իսկ զբանջի էլ վաղ—

Լիբանանին: Շրջանը կունենայ տեղական ժամադրեման, սուլթանից նշանակված ղեկավարի ղեկավարի հրամանատարութեան տակ, և նրա կառավարները կը դորադրվեն տեղական պէտքերի վրա, հանելով միայն մի որոշ գումար, որը կը դորձադրվի ընդհանուր պետական պարտքը վճարելու համար կամ կը միացվի ծխախոտի մենաւաճառութեան եկամուտներին: Բացի դրանից, արդարադատութիւնը կանցնի ընտրովի դատարանների ձեռքը և դատարանների նախագահները միայն կը նշանակվեն առաջվան պէս Օսմանեան կայսրութեան մէջ ներկայումս գոյութիւն ունեցող օրէնքների հիման վրա:

Թէ ինչ պտուղներ կը տան իրականութեան մէջ այդ նոր կարգերը, դա, ի հարկէ, կը ցոյց տայ ապագան, սակայն Բերլինի դաշնագրով թիւրքաւոր յանձն առած պարտաւորութիւնների տեսակէտից նրանց չէ կարելի անբաւարար և մինչև անգամ քիչ համարել: Թիւրքաց կառավարութիւնը, երկար տատանումից յետոյ, ըստ երևոյթի, սկսում է խոստովանել, որ հայերը նոյնպիսի իրաւունքներ ունեն, որպիսի իրաւունքներ նա տուել է Լիբանանի և Կանդիայի քրիստոնեաներին:

Տեսականապէս մի այլպիսի զիջում չէ կարող ոչինչ հակաճառութիւնների առաջացնել և մեզ ամենին չէ դարձանում, որ Լոնդոնում ուրախանում են այդ բանի վրա, որպէս յորդ Բոլքէրիի միջնորդութեան խոշոր աջողութեան վրա, որը, սակայն, նա կարողացել է գլուխ բերել Բերլինի կառավարութեան կողմնակի օգնութեամբ, որը իր թէ խորհուրդ է տուել սուլթանին զիջողութիւններ անել:

Սակայն ինչ էլ լինէր շարունակվող հայկական վերանորոգութեան ծագումը, այդ քայլին ուրախութեամբ կը նայեն Եւրոպայում բոլոր կառավարութիւնները և քաղաքական շրջանները, լաւ հակառակում, որ ընդհանուր խաղաղութեան և պետութիւնների մէջ միջազգային լաւ յարաբերութիւնների կայունութեան համար ամենին ցանկալի չէ հայկական ազդեցութեան պարբերաբար կրկնութիւնը, մանաւանդ այն ձևով, ինչ ձև որ կարողացան այս անգամ տալ այդ շարժման ղեկավարները: Օսմանեան Դուռը որքան քիչ առիթներ կը տալ օտար միջամտութեանը իր ներքին գործերում, այդքան աւելի լաւ կը լինի թէ նրա համար, և թէ Եւրոպայի հանգստութեան համար: Մեզ մօտ, Իրաւաստանում, այդ բանի մէջ համոզված են բոլոր առողջամտ մարդիկ, որոնք անկեղծ կերպով ուրախանում են այն բանի համար, որ Հայաստանի թիւրքաց զաղանութիւնների պատրուակով

սկսված երկրորդ քաղաքական խնդրանք արձագանք չը գտաւ մեր կառավարչական շրջաններում, որոնք պահանջներ իմաստուն հանգստութիւն, որ ամենալաւ ապացոյց է այն բանի, որ սուլթան Սուլթան-Համիդը ամենին առիթներ չուներ երկրի կրկնութեանը և է փառասէր ձգտումներով մեր կողմից: Թող միայն թիւրքաց կառավարութիւնն ապացուցի, որ ինքն կատարելապէս անկեղծ և առանց որ և է յետին մտքի վճռել է բարեօրէն իր հայ հպատակների դրութիւնը: Դրանից աւելին չեն պահանջում նրանից ոչ Պետերբուրգում, ոչ այն քաղաքական կենտրոններում, որոնք նրա նման ամենին ցանկալի չեն համարում արեւելեան հարցի նոր յարուցումը: քրիստոնեաների պաշտպանութեան համար օտար միջամտութեան նախկին ձևով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎ

«Անկասկած, մեծ պետութիւնները կշռեցին իրանց միջամտութեան անխտաճիւղի հետեւեղները: Եթե մինչև անգամ թիւրքաց տեղական իշխանութիւնների և թիւրքաց ընդհանուր իշխանութիւնների առիթներ չը տայ եւրոպական պետութիւնների ղեկգաւթներին, ներկայ ընկուածութեան առաջին ակտը միայն, որը սրանից յետոյ արդէն թախանձանքով պէտք է պնդել Բերլինի դաշնագրի պատշաճաւոր յորձանք շուտափոյթ իրագործելու վրա: Արդեօք թիւրքաւոր խոհմ չի լինի վերջապէս, և կը խոստանալ արեւելք անհրաժեշտութեան առաջ, առանց յետին մտքերի: Այդ լիակատար միջամտութեան օրդանը նրան շատ լուրջ նախազգուշութիւն է տալիս:

«Մենք ուրախ ենք լսել և հաւատալ, որ foreign office-ի համբերութիւնը վերջապէս հասել է: Տաւալ և հինգ տարիների ընթացքում արտաքին գործերի ղեկավար ստատու-սեկրետարները զանգատում էին Հայաստանում տեղի ունեցած խայտառակ ղեկաւորման դէմ և թէքորմներ էին պահանջում: Այդ զանգատները և պահանջները ոչինչ ազդեցութիւն չը գործեցին թիւրքաց կառավարութեան վրա... Եթէ պետութիւնների այժմ նշանակված ներկայացուցիչներին չի աջողում ճշմարտութեան արմատը գտնել,—որ շատ հաւանական է,—այն ժամանակ անկապող պէտք է աւելի հեղիւսակաւոր յանձնաժողով նշանակվի, և մենք շատ կասկածում ենք, որ այդ յանձնաժողովում թոյլատրվի մասնակցել թէկուզ մի թիւրքի: Դրանից աւելի անմիտ բան չը կայ, քան թէ խօսել թիւրքաւոր

մասին, որպէս մի անկախ պետութեան մասին, որը իրաւունք ունի հայերի և քիւրդերի հետ իր ուղածին պէս վարվելու: Թիւրքաւոր ձեռքերը կապված են դաշնագրերով, հանդիսաւոր պարտաւորութիւններով: Եւրոպայի առաջ,— այնպիսի պարտաւորութիւններով, որպիսիք կարելի է պահանջել միայն մի պետութիւնից, որը գոյութիւն ունի և ապրում է չնորհալ այն հանգամանքի, որ նրան համբերում են: Այդ պարտաւորութիւնները կատարելու համար թիւրքաւոր պատասխանատու է Եւրոպայի առաջ:»

«Պէտք է ենթադրել, որ սուլթանը, վերջապէս, կը սթափվի և չի կամենայ աւելի էլ մեծ անախտութիւններին ենթարկվել:»

«Гражданин»

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը, որ տեղի ունեցաւ քաղաքային դռմայի դահլիճում, ղեկավարելի 25-ին, բազմամարդ չէր ժողովը բացվեց 24 անդամների ներկայութեամբ, որոնց թիւը վերջը հասաւ 35-ի: Անցեալ տարվայ ժողովներում ներկայ էին ինուսու մօտ 60—80 անդամներ, ուստի այս անգամ անդամների այդ քչութիւնը աչքի էր ընկնում, թողնելով ծանր տպաւորութիւն:

Ժողովի պարագլուխը զիլաւոր առարկան 1893 թվի հաշիւների ընտելութիւնը և հաստատութիւնն էր: Կանոնադրութեամբ, անցեալ տարվայ հաշիւները պէտք է ընտելին մայիս ամսին և այս ղեկավարների 15-ին պէտք է կայանար մի ուրիշ ժողով յառկապէս 1895 թվի նախահաշիւը ընտելութեան հաստատելու համար: Իսկ այս անգամ մայիսի ժողովը տեղի ունեցաւ ղեկավարների վերջին, և այդ պատճառով ղեկավարների պարտաւորի ժողովը կը կայանայ գուցէ միայն յունվարին: Դա, ի հարկէ, ցանկալի չէ: Տարաբարդաբար, այդ յետաձգելու գործում մեղաւոր են ընկերութեան ձիւղերի վարչութիւնները, որոնք իր ժամանակին հաշիւները չեն ուղարկում, և այդ պատճառով կենտրոնը ստիպված է լինում յետաձգել ժողովներ հրաւիրելը:

Նախ քան հերթական հարցերին դիմելը, նախագահի առաջարկութեամբ ժողովը յարգեց հանգուցեալ կայսր Ալեքսանդր III-ի յիշատակը, ոտի կանգնելով:

Ժողովում կարգացվեցան վերաստուգող յանձն

կեանքի պատմութիւնը առանձնապէս հետաքրքրական է հայոց ժամանակակից գրականութեան լուրջ ուսումնասիրութեամբ զբաղվողների համար:

Տեսնում էք քանի մահացու մեղք է գործել պ. Վեսելովսկին: Նա խմբագրել և հրատարակել է մի ստուար հատոր «Հայոց վիպագիրներ» վերնագրով, առանց խորհուրդ հարցնելու Ար. Թումանյանից այն աղբիւրների մասին, որոնցից նա պէտք է նիւթ քաղէր իր ժողովածուի համար: Նա, նոյն պարոնի համար անհասկանալի պատճառներով, այդ հատորումն է ղեկավարել Բ. Պատկանյանի, Պ. Պառնեանի և Պ. Աբովյանի գրութեաների թարգմանութիւնները և նրանց կենսագրութիւնները, մինչդեռ նա այդ պէտք է անէր իր այն յօդուածում, որ գրված է հայոց պարբերական մամուլի հարկաւորակի առիթով: Վերջապէս, նա Ալ. Դատուրեանի հետ թարգմանել է Սուրբուհիանի «Պէպո» «Հայոց վիպագիրներ» երկրորդ հատորի համար և անգղից յօդուած է նուիրել Սուրբուհիանի գրութեաներին «Артисты» թերթում, մինչդեռ առողջ դատողութիւնը պահանջում է, որ նա այդ բոլոր աղբիւր հայոց մամուլի մասին խօսելիս, որովհետեւ հայոց մամուլը այժմ դարձել է մի բեմ, որի վրա անդադար զանազան կատակերգութիւններ են խաղում այնպիսի առաջնակարգ ղեկաւորներ, ինչպէս Թումանյան և tutti quanti.

Սակայն պ. Վեսելովսկու այդ բոլոր մեղքերը նսեմանում են այն անասելի մեղքի առաջ, որ նա գործել է համակրութեամբ խօսելով վեհապետի և վիճակի միջամտութեան հայ ազգի մատուցած ծառայութիւնների մասին և որ նրան երբէք չի ների հայ նորակազմ և մեղեկածին կրթական կուսակցութիւնը: Եւ ահա Բոստօլի

լրագրի յօդուածագիրը շանթեր է արձակում Մերթիթարեանների զիլին, այնպիսի շանթեր, որ առաջ գրականութեան մէջ ընդունված է անուանել «Троим не изъ тучи, а...»

Այդ բարեխնդրի թաղի իւպիտերի ասելով, հայ ազգը ոչինչ չէր կորցնի, եթէ վեհապետի և վիճակի միջամտութեանը ամենին գոյութիւն ունեցած չը լինէր, որովհետեւ Մերթիթարեանները ոչ այլ ինչ են, եթէ ոչ մի հետեւ և աշխարհից և մարդկանցից հեռացած ճգնաւոր-սքեղանք, որովհետեւ նրանք սաստիկ զբաղված են կաթօլիկութեամբ և յանելով, որովհետեւ Մերթիթարեանները զբաղված լինելով իրանց անձնական բարեկեցութեամբ, ոչ թէ միայն լուսաւորութիւն, այլ և հասարակ քաղաքակրթութիւն չը կարողացան տարածել հայերի մէջ... Մերթիթարեանները զբաղվում են բացառապէս հայոց հնագիտութեամբ: Ամենալաւ նիւթերը նրանց տուել են հայ լուսաւորչական հոգեւորականութիւնը և Էջմիածնի վանքի այժմեան միաբանութիւնը:

Ինչպէս տեսնում էք, պ. Թումանյան պատկանում է այն մարդկանց թիւին, որոնց համար ամեն օր ապրիլի 1-ն է: Երբեք մէկը, կամ Մերթիթարեանները աշխարհից հեռացած անասկաւորակ անհմտ են, կամ նրանք նուիրված են կաթօլիկութեան և կամ զբաղված են միայն իրանց անձնական բարեկեցութեամբ: Այդ առաջինը երկրորդը՝ ո՞վ ամբողջ հայ ազգի մէջ, բացի Բոստօլի լրագրի յօդուածագիրից, թոյլ կը տայ իրան գրել, որ վեհապետի և վիճակի միջամտութեանը չբացառապէս զբաղվում են հայկական հնագիտութեամբ և որ համեմատաբար նիւթերը նրանց տուել են հայ լուսաւորչական հոգեւորականութիւնը և Էջմիածնի վանքի այժմեան միաբանութիւնը:

Հայոց գրականութեան հետ հանգամանք էն ծանօթ այդ պարոնի կարծիքով Ալիշան և Ալ. Թումանյան լուսաւորչական հնագիտութեամբ են ըզբաղվում, Մերթիթարեանների հրատարակած կլասիկական գրութեաների թարգմանութիւնները, հրաշալի բառարանները, բնագիտութեան դասագրքերը, այդ բոլորը հնագիտութեան է վերաբերում...:

Շատ քան կարելի է գրել Մերթիթարեանների միակողմանի ուղղութեան դէմ, բայց չը խօստովանել այն մեծամեծ ծառայութիւնները, որ նրանք մատուցել են հայ ազգին, խօսել նրանց մասին այնպէս, ինչպէս խօսում է այդ յօդուածագիրը, այդ, մեր կարծիքով, աններելի յանցանք է:

Մի նկատողութիւն: Եւ խորհուրդ ենք տալիս պ. Թումանյանին իր աւելորդ գրած յօդուածները՝ տպագրութեան յանձնելու առաջ՝ տալ ուղղելու մի գրադէտ անձի: Հայերէն, պ. Թումանյան, ինչ ոճով ուղղում էք գրեցիք, կարող էք աներկիւղ տպել, քանի որ ձեզ պէս գրողներ չափեր կան, և քանի որ նոյն իսկ մեր հայկաբանները, ինչպէս Ն. Բարամեան և Ա. Կաշայան, համաձայնութիւն ասած բանիմասին գաղափար անգամ չունեն. բայց ռուսերէն գրելիս պէտք է մի քիչ զգոյշ լինել: Օրինակները աւելորդ են:

Վերջացնելով մեր խօսքը այդ պարոնի մասին, որից բաժանվում ենք ամենայն ուրախութեամբ, մենք դարձեալ պէտք է վերադառնանք պ. Վեսելովսկու յօդուածին, որ սաստիկ զուր չէ եկել նոյնպէս և «Южный Край» լրագրի աշխատակցի Հ. Մ. ինչ Զուր չեն ասել «les grandes esprits so touchent»:

Մեծապատիւ Հ. Մ. կարծում է, որ ոչ միայն չարժէք ուսաց լրագրիներում համակրական յօ-

դուածներ գրել հայոց մամուլի հարկաւորակի առիթով, այլ և չը պէտք է ուրախանալ, որ վեհապետն ունեն հայկական պարբերական հրատարակութիւններ: Այդ «մեծապատիւ մուրացկանը» շատ բարձրից է նայում հայոց ամբողջ գրականութեան վրա. «Այնքան է, ասում է նա, որ այդ մեղեկածին գրականութիւնն է: Ոչ մարդկութիւնը, ոչ հայ ազգը ոչինչ չէին կորցնի, եթէ նա ամենին գոյութիւն չունենար»:

Մեր խորին համոզմունքով աւելորդ է վիճել այնպիսի հանգամանքների լաքէններին հետ, ինչպէս են Հ. Մ. և Comp. Որոշ հասարակական հոսանքների կեանքի տղուտ տակաւնից ասպարէզ են հանում որոշ մուլտիպլեր, դառնալով մեծութեան, բայց մի և նոյն ոգով գործող, որոնք աշխատում են հալածել այն ամենը, ինչ որ լուսաւոր է և համակրելի: Դրանց համար է ասել մեծ երգիծաբանը.— «Что-то есть ужасное въ этих людяхъ, у которыхъ смолоду какъ бы прожежены внутренности. Ни разсужденія, ни чувства, ни даже самыхъ простыхъ человѣческихъ пороковъ. Ни силы, ни слабости. Стоять они, какъ гильотина, посередѣ дороги: кто посиленѣе—тотъ проходитъ мимо нея и пюжетъ, кто послабѣе, того она захватываетъ и обезглавливаетъ. »

Ամեն բանից երևում է, որ Հ. Մ.—ն պատկանում է թոյլ լաքէյների թիւին: Թեքնք ուրեմն, ընթերցողներ, և անցնենք նրա մօտով, հաւատացած լինելով, որ Մերթիթարեանները զաւթ տաւերը կարող են Յոնան մարդաբէի նման պահպանել իրանց գոյութիւնը նոյն իսկ կէտի փորում և յամենայն դէպս դէմ կանոնն այնպիսի տառախներին կոկորդուս, ինչպէս են Հ. Մ. և իր նմանները:

Տ. Յովհաննիսեան

Типографія Канцел. Главнотач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 43.